ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 17-18-Ը ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ/ՄՈՍԿՎԱ/ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ

1. **<u>Անունը, ազգանունը՝</u>**

   Արմեն Սիմոնյան

2. **<u>Զբաղեցրած պաշտոնը՝</u>**

   ՀՀ ՏԿԵ նախարարի տեղակալ

3. **<u>Գործուղման վայրը և ժամկետները.</u>**

   Ռուսաստանի Դաշնություն (Մոսկվա), 2023 թվականի հունվարի 17-ից 18-ը

4. **<u>Հրավիրող կողմը.</u>**

   ԱՊՀ միջպետական ավիացիոն կոմիտե

5. **<u>Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).</u>**

   Մասնակցություն ԱՊՀ միջպետական ավիացիոն կոմիտեի ավիացիայի և օդային տարածքի օգտագործման խորհրդի նիստին

6. **<u>Քննարկված թեմաները.</u>**

   - ✓ Միջպետական ավիացիոն կոմիտեի 2023 թվականի ծախսերը,
   - ✓ Խորհրդի կողմից Միջպետական ավիացիոն կոմիտեի գործունեությունից ստացված միջոցների օգտագործման կանոնակարգը հաստատելու անհրաժեշտությունը,
   - ✓ Խորհրդի կողմից Միջպետական ավիացիոն կոմիտեի անձնակազմի վարձատրության կարգի կանոնակարգը հաստատելու հարցը:

7. **<u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.</u>**

Հանդիպում է տեղի ունեցել ՌԴ տրանսպորտի նախարարի տեղակալ Ի.Պ. Չալիկի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են օդային տրանսպորտի ոլորտում համագործակցության հետ կապված հարցեր:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Խորհուրդը հաստատել է Ավիացիայի և օդային տարածքի օգտագործման խորհրդի կանոնակարգի նոր տարբերակը և Միջպետական ավիացիոն կոմիտեի կանոնակարգը: Կոմիտեի ֆինանսական գործունեությունը կարգավորող փաստաթղթերի փաթեթը դրվել է շրջանառության մեջ և դեռևս համաձայնեցման փուլում է:

Օլեգ Ստորչևոյը ընտրվել է Միջպետական ավիացիոն կոմիտեի նախագահ, իսկ Տատյանա Անոդինային առաջարկվել է նշանակվել խորհրդի պատվավոր նախագահ՝ խորհրդատվական ձայնի իրավունքով:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Որոշում է կայացվել, որ Ավիացիայի և օդային տարածքի օգտագործման խորհրդի հաջորդ նիստը կանցկացվի 2023 թվականի մարտի 1-ին Մոսկվայում:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը**

23.01.2023